ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Գոլոռխ Քեշավարզ Ռահբարի « Հայ-Իրանական քաղաքաշինական առնչությունները Մ.թ.ա 8-րդ-Մ.թ. 7-րդ դարերի ճարտարապետության համատեքստում» թեմայով ԺԸ.00.01 «ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գոլոխ Քեշավարզ Ռաբարիի ատենախոսությունը „ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ. Թ. Ա. 8-ՐԴ – Մ.Թ. 7-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ„ վերնագրով, բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից, ընդհանուր եզրակացությունից, գրականության ցանկից, նկարացանկից և հավելվածներից: Գիտական ղեկավարն է Ճ.դ, Պրոֆեսոր Դ.Գ.Քերթմեջյանը:

Ներածությունը: Հեղինակը ներածության մեջ մինչև ատենախոսությանբուն նպատակին անցնելը կարևորում և ներկայացնում է երկու կարևոր հանգամանք, որոնք հիմնաքարային են բոլոր հնագույն մշակույթ ունեցող ժողովրդների պատմության ընթացքը պատկերացնելու համար: Դրանք են **լեզուն**, լեզվի մեջ պահպանված բառերը, որոնք բնորոշում են քաղաքը-քաղաքակրթությունը, գյուղը-որպես առանձին բնակելի միջավայր և նույնիսկ թաղերը, որ հետագայում մաս են կազմել քաղաքին: Մյուս կարևոր հանգամանը, որը ուշադրություն է գրավում ներածության մեջ **կենսատրպի** նկարագրություններն են, որը էական նշանակություն է ունեցել քաղաքակրթության ծագման և զարգացման համար: **Ատենախոսության նպատակն է:**

Բաժնում գրում է

„համեմատական կարգով և վերլուծականորեն ուսումնասիրել Հայաստանի և Իրանի համապատասխան բնակավայրերը՝ ներդնելով դրանց տվյալները ժամանակաշրջանի

իշխող սկզբունքներում, ինչպիսիք են **հունական, հռոմեական և հելլենիստական քաղաքաշինական** առանձնահատկությունները, որոնք հիմք են ծառայել ողջ մարդկային պատմաքաղաքաշինական մշակույթի կերտման գործընթացներում,.:

Համաշխարային քաղաքաշինության պատմության կարևոր հանգույցներից է Միջագետքի բնակավայրերի կազմավորումը, որում կարևորվում են **պարսկական և հայկական** համապատասխան ժառանգությունները

բ.Իրականացվել է **լանդշաֆտի** և քաղաքային հատակագծումների առանձնահատկությունների և հորինվածքի ձևերի ուսումնասիրություն:

Դիտարկվել են **«քվադրանտային»** հորինվածքով քաղաքները, որոնց ուսումնասիրությանն անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ. իրանական համապատասխան քաղաքների ուսումնասիրություններն ամփոփվել են Ա. Ու. Պոպի աշխատության զանազան մասերում (1964):

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ: Հեղինակը անդրադարձ կատարելով մի բավականին և զուցե նաև կարևոր տեսակետի մեջբերում է Ռիչարդ Ֆրայը, երբ գրում է. «Որքան էլ դա պարադոքսալ թվա, բայց Հին Իրանի պատմությանը վերաբերող աղբյուրների սակավությունը նաև հարաբերական առավելություն ունի, որովհետև Իրանի հնագույր անցյալի մասին ցանկացած, թեկուզ և չնչին տեղեկություն ձեռք է բերում առավել մեծ նշանակություն ու հնչեղություն, քան, օրինակ, գրավոր աղբյուրներով շատ ավելի հարուստ ու պատշաճ լուսաբանված հին եգիպտական, անտիկ հունական ու հռոմեական շրջանների պատմության վերաբերյալ, դրան առնչվող նյութական մշակույթի որևէ նորահայտ առարկա, արձանագրություն կամ առանձին բառ»:[1] Հավանաբար հենց այս մոտեցումն է, որ ատենախոսին ստիպել որպես թեկնածուական թեմա ընտրել և լծվել աշխատանքի նման բարդ թեզուկներով լեցուն, մեծի մասամբ քիչ հետազոտված (Իրանի խոր անցյալի հետ կապված) խնդիրների յուրովի բացահայտմանը:

Առաջին գլխում ատենախոսը երկու պատմական իրողություն է արձանագրում, որոնք կարևոր վկայություններ են **պետականության և ընդհանուր մշակույթային դաշտի**

[1] Frye, R., The history of ancient Iran, Munchen, Vesladsbuchhandelung, 1984, P. 13-14

ձևավորման և հզոր քաղաքակրթության գոյության առումով: Հենց այս պահից էլ սկսվում է զուտ իրանական պետականության և ազգի պատմությունը: Դրանք են՝ „ Հայտնի է, որ հին իրանցիները զրադաշտականության հետևորդներ էին, որի մասին վկայում են կառուցված հնագույն մեհյանային շինությունները:.. ապա..Իրանը կոչվել է «Aryan» կամ «Aryanshahr», որ նշանակում է արիների կամ արիացիների երկիր: Հետագայում ավեստական «Aryan» բառը փոխակերպվել է «Eran»-ի, որից էլ բխում է «Իրան» ձևակերպումը:[2] „ Ընդհանուր առմամբ այս ատենախոսության այս գլուխը ամբողջությամբ համապատասխանում է „ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐ„ վերնագրին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: Երկրորդ գլուխը վերնագրված է ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ , Մ. Թ. Ա. 8-ՐԴ – Մ. Թ. 7-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ : Այն սկսվում է Աքեմենյան, Պարթևական ու Սասանյան դինաստիական հարստությունների քաղաքաշինական ժառանգությունից, դիտարկվում հելլենիստական ազդեցությունները և միջնադարյան քաղաքշինության առանձնահատկությունները: „ Շքեղ ու տպավորիչ աքեմենյան ճարտարապետությունն իր ողջ յուրատիպությամբ հիանալիորեն է արտացոլված հենց Պերսեպոլիսում„ այս դիպուկ բնութագրմամբ հայցվորը մանրակրկիտ նկարագրում է ամբոջ քաղաքաշինական անտիկ հրաշալի և նախածային սկզբունքներով կառույցը: Առանձին անդրադարձներ են կատարվել զորածառնական բնույթի բոլոր կառույցներին՝ արքայական պալատը, զանձարան, կանաց համար հատկացված „թագուհիների պալատը„ և այլն: Ինքնին, ատանենախոսության այս հատվածը այնքան տեղեկատվություն է հաղորդում ընթերցողին, որ ակամայից մտածում ես թե այս նկարագրությունների գիտական վերլուծությունը ինքնին արդեն իսկ ատենախոսության առանձին թեմա է: Կատարվել են այլ քաղաքների և այլ ժողովրդների ճարտարապետության ձևաբերումներին անդրադարձներ, որոնք ավելի վստահելի են դարձնում հեղինակի բազմակողմանի հետազոտություններ արժանահատությունը և կատարած ծավալուն աշխատանքը: Գլխի եզրակացությունների մեջ „ Հին Իրանի վաղագույն քաղաքների ֆիզիկական ձևագոյացումն ու կառուցվածքը կապված է եղել բնակլիմայական, աշխարհագրական, ռազմական ասպեկտների, առևտրային,

[2] Encyclopaedia Iranica, vol. VIII, Costa Mesa, Mazda, California, 1999, P. 533-534

քաղաքական, կառավարչական, հանդիսավորության կամ ծիսականության գործոնների, ինչպես նաև հասարակության մշակութային ու սոցիալական առանձնահատկությունների, կրոնի, հոգևոր հավատալիքների ու ավանդույթների հետ,, (կետ1) հիմնավորումներով հաստատագրված տեսակետ է, որին հետևող մնացած եզրակացությունները լոկ հաստատում են և ամբողջացնում են առաջին կետում արված հետևությունները:

Երրորդ գլուխը կրում է ,,ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ Մ.Թ.Ա. 8-ՐԴ - Մ.Թ. 7-ՐԴ ԴԱՐԵՐԸ,,: Գլխում ներկայացված են , որտեղ ենթավեռնագրով ներկայացված են ուրարտական, այնուհետև երվանդունիների, հելենիստական, պարթևա-հռոմեական և Վաղ միջնադարյան պայմանական շրջափուլերը: Հեղինակը օգտվել է բազմաթիվ հեղինակների աշխատություններից, այդ թվում՝ Ն.Մառ, Շուլց, Ռեյնոլդս, Օրբելի, Բ.Պիոտրովսկի, Կ. Հովհաննիսյան, Գ. Տիրացյան, Հ. Ավետիսյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով, Մ. Բաղալյան, Վ. Քյայս, Տ. Ֆորբս և նկատելի նրա մասնակցությունը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված հնագիտական պեղումներին և տեղյակ է այդ պեղումների ընթացքում ձեռք բերված հնագիտական նյութի քննության այդյունքում տարբեր գիտնականների կատարած եզրակացություններին: Կարևոր մեջբերում է Վաղարշապատի մասին հեղինակի ձևակերպումը ,,Ազդյուրագիտական տվյալներով Վաղարշապատի անառիկությունը պայմանավորված է եղել նրա պաշտպանական համակարգով, ամրակուռ պարսպապատերով ու փորված խանդակներով:,,- չափազանց բնութագրական է հարթավայրային լանդշաֆտների տարածքում կառուցված բաղաքների պաշպանության խնդրի լուծման համար:

Ընդհանրապես քննական վերլուծությունները

Հունական արձանագրություն ունեցող քարանձավային տաճարը Կամիլա Տրեվերը համարում է Վահգնի և ոչ Հերակլեսի տաճար(Թախտ Ի Սուլեյմանի), իսկ մենք արդեն գիտենք, որ Եղեգնիկից, ջրից ու կրակից ծնված Վահագնի առասպելը հասնում է մինչև Շումեր: Տես՝ Օքսֆորդի համալսարանի բառարանը: Գրեթե 2000 տարի անց գրի է առել Խորենացին: Այսինքն թե Լեհման Հառպտի տաճարի հելենիստական ծագման և թե Տրեվերի

տեսակետը Հայկական ծագման վերաբերյալ թեական է իսկ որ **տաճարը պարսկական է՝ եվրոպայի գիտական միտքը չի քննարկել:**

1.Արատտայից մենք ոչ մի գրավոր տեղեկություն չունենք, բայց ,,Էնմարգարը և Արատտան,, էպիկական ստեղծագործության մեջ ներկայացնում է գրի գյուտը, որի շնորհիվ բանագնացը Շումերի և Արատտայի թագավորների խոսքը ճշգրիտ հասցնում էր: Ընդ որում բանագնացը Շումերից Արատտա ճանապարհը անցնելու համար, հաղթահարում էր գետեր և ջրվարանցելի լեռներ: Նույնը մենք տեսնում ենք Գիլգամեշի Էպոսում: Այսինքն Արատտան Շումերից հյուսիս - արևելք էր և ոչ հարավ, պարզ մի պատճառով, դեպի հարավ ծովն էր: Ընդ որում արդեն կան բավագանին գիտական հրատարակումներ, որոնք Արատտան տեղադրում են Հայկական Լեռնաշխարհում(Գավուկչյան, Մովսիսյան, Դավթյան, Սարգսյան և այլն): Նման տեսություններ ի հայտ է եկելմիայն 20-երորդ դարում և բնականաբար բացակայել են մինչև 20-երորդ դարի վերջը եղած գիտական հրատարակություններում: Այս մեջբերումները ես բերում եմ միայն մեկ պատճառով գիտությունը առայժմ չափազանցնում է հելենիստական ազդեցությունները մշակույթային արևելքի նկատմամբ: Չմոռանանք նաև որ հելենիստական ճարտարապետական մշակույթը առանձնապես առանձնապես օրդերների առումով ժառանգորդն է Կրետեի, կամ 2-րդ հազարամյակի միջերկրական մշակույթի:

2. Հեղինակը չափազանցեցնում է նաև հիդրոինժեներական կառույցների, ակվեդուկների ճարտարագիտական տեխնոլոգիական հնարքները կապելով հռոմական, կամ հոռմեական ինժեներական մտքի ազդեցության հետ: Կյուրոսի արքայության ժամանակներում լեռնային և կիսաանապատային տեղանքում կառուցվել է ջրատար (քարվեզ) մինչև 162կմ երկարությամբ: Իրանական ամրողջատիրություններ նվաճել էր Միջագետքը և բնական էր որ, ինժեներական մտքի և կոնստրուկցիաների ամբողջ գիտելիքները անմիջապես սկսել է ներդրել իր լայնատարած միապետության ամբողջ տարածքում, իսկ այդ գիտությունները ձևոք էին բերվել Շումերից սկսած 2000տարի (Տես Դավթյան Ա. 2022): **Մշակույթը, առանձնապես ճարտարագիտական մտքի զարգացումները ներթափանցման մեծ ընդունակություն են ունեցել այն ժողովուրդների դեպքում, որոնք իվիճակի են եղել ընկալելու այս կամ այն ինժեներական մտքի կարևորությունը ու ներդրնելու իրեց առորիայում:**

4. Ազգերի ձևավորումը ուղակիորեն կապված է որոշակի տարածքում լեզվի, մշակույթի և ավանդաբար ձևավորված և պահպանվող սովորությունների ընդհանրականով: Պետության ձևավորման համար, որպես կանոն, պարտադիր պայման էր կրոնը, որը թե պարսիկների և թե հայերիս համա միաստվածությունն էր: Նախնական մշակույթի ազդեցությունը ահռելի է ապագա զարգացումների ծիրում: Միաստվածությանը հայերը փորձեցին պետականորեն անցնել 301թվականին(Արգար թագավոր), սակայն դա հաջողվեց միայն 301թ, ընդ որում պահպանելով ավանդական կրոնական տոնացույցը, որը անխափան գործում է առ այսօր: Պարսիկները զրադաշտությունը ընդունելուց հետո Ավեստան փոխեցին Ղորանով պահպանելով մեկ Աստծո գաղափարը: Պնդել թե բազմաստության ահռելի պանթեոնով հելլենիստական մշակույթը պիտի խոր արմատներ գցեր իրանական ժողովրդի հոգում ավելի բան քիչ հավանական է: Այնպես որ ճարտարապետությունը, որպես մշակույթի կարևորագույն մի ճյուղ հելլենիստական դիմագծեր կարող էր պահպանել միայն իշխանությունների կողմից բռնությամբ. ինչը տեղի է ունեցել մ. թ. ա. 2-1-ին դարերում Հայաստանում, քաղաքական հիմնավումներով անկախության պահպանման նպատակով մինչև 1-3 -րդ դարերը:

5. Հասարակական զարգացումները անտիկ ժամանակներում հիմնականում պայմանավորված էին պետություն ունենալու հանգամանքով:

14-րդ էջում հեղինակը հղում է կատարում նկար 1-ին որը քարտեզ է: Քարտեզի աղբյուրը նշված չէ: Սրան հետևող նկ3,4, 13 նույն խնդիրն ունեն. իսկ Նկ 4 և 13 (Հին Աթենքի և Պերգամոնի հատակագծերը, չնայած առկա է մասշտարը, բացակայում է լանդշաֆտային իգոգծերը, որը էական է ինչպես ճարտարապետների, շինարարների այնպես էլ հնագետների համար)

Կարծիք: Կարծիքը ընդհանուր առմամբ դրական է: Հեղինակը պարսկերենից զատ՝ օգտվել է այլ լեզուներով ավելի քան 100 աշխատություններից, աշխատանքային կարգով ծանոթ նկարագրվող հուշարձանների մեծ մասին, մասնակցել է հնագիտական պեղումներին Իրանի Իսլամական Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտությունները և գիտական արդյունքների վերլուծությունը իրականացված որակով, փատճառահետևանքային կապերի տրամաբանությամբ և նյութի հիմնավոր իմացությամբ:

Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրների բավականին մասը նոր հետազոտությունների արդյունքներն են:

Ըստ էության թերությունները գիտական մոտեցման խնդիրներ են, որոնք կարելի է վիճարկել, բայց ոչ մերժել: Գրված է գեղեցիկ հայերենով, տառասխալներ չեմ նկատել: Հավաքված նյութը և մեկնաբանությունները կարող է գրքի վերածվել, քանի որ եղած գիտական նյութը բավականին շատ է, վերլուծությունները իրականացված են գիտական հիմնավորման սկզբունքով, եզրակացությունները հիմնականում վերջերս իրականացվող հնգիտական պեղումների և հետազոտությունների հիման վրա:

Կարծում եմ, որ ատենախոսը ԳՈՒՌՈՒ ՔԵՇԱՎԱՐՋ ՌԱՖԲԱՐԻՆ բավարար մասնագիտական կարողություններ ունի և ատենախոսությունը ԳՈՒՌՈՒ ՔԵՇԱՎԱՐՋ ՌԱՖԲԱՐԻ„ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ. Թ. Ա. 8-ՐԴ – Մ.Թ. 7-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ„ բավարարում է ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան շնորհմանը:

Ճ.դ., Ավագ գիտաշխատող
Գ.Ի.Կ սմբիոնի պրոֆեսոր — Ս.Մ.Շահինյան

Ս.Մ. Շահինյանի ստորագրությունը
Հաստատում եմ՝ ՃԵՀԱՀ գիտական
քարտուղար տ.գ.թ. դոցենտ — Լ.Հ.Լևոնյան

15.11.2024 թ.